ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Ակսել Բակունցի հայրը՝ Ստեփան Թևոսյանը, Գորիսի Շենից էր, մայրը՝ Բոխչադյուլ Խուրշուդյանը, հարևան Երիշեն գյուղից։ 1895 թ. Ստեփանը հինավուրց Շենից ընտանիքով փոխադրվում է հարթավայրում կառուցվող Գորիս գյուղաքաղաքը, 1899 թ. հունիսի 13-ին նրա ընտանիքում ծնվում է չորրորդ երեխան՝ Ալեքսանդրը, որը և առաջին արու զավակն էր։ Նրանից հետո Թևոսյաններն ունեցել են ևս չորս որդի և չորս դուստր։

Ստեփանը գյուղացի էր, բայց ձեռքի բնածին արատի պատճառով դժվարանում էր հողագործությամբ զբաղվել և բախտը փորձում էր առևտրի մեջ։ Նրա գործերի լիակատար ձախողմանը զուգադիպում է Ալեքսանդրի ծնունդը, և տան անդրանիկ որդու մանկությունն անցնում է ծայր աղքատության մեջ։

Ալեքսանդրը (Սանթրին) մեծանում էր որպես գյուղի սովորական երեխա, սովորում տեղի հայոց «խեղճ» ուսումնարանում։ Նա հաճախ էր լինում մայրական գյուղում՝ Հարություն (Արթին) պապի նահապետական տանը. այդ տպավորությունները հետագայում ամենից ավելի մարմնացան բակունցյան էջերում։

Ալեքսանդրը շատ լավ աշակերտ էր, բայց՝ ոչ արտակարգ։ Արտակարգը, որ այն տարիներին դիտել են նրա մեջ ընկերները, մտերիմները, հոգեկան ծով բարությունը և արդարության ծարավն են եղել, այն հատկությունները, որոնք պետք է հավասարապես ճառագեին թե՛ մարդ Ալեքսանդրի ծանր կյանքի դժվարին ուղիներում, թե՛ արվեստագետ Ակսելի «մյուռոնի նման սրբազնագույն երգերի», «սկիհների» մեջ։

1910 թ. Մատթեոս Բ կաթողիկոսը հարգում է 152. գորիսեցիների «խորին խնդիրը» «նյութական միջոց չունեցող» Թևոսյանի «առանձնահատուկ ընդունակության» տեր որդուն էջմիածնի ճեմարան ընդունելու մասին։ Սկսվում է Ալեքսանդր Բեկյանի կամ Բակունցի (այդպես գրվում էր իր չորրորդ պապի անունով, որ ըստ տեղեկությունների եղել է Բեգլար, ըստ մի աղբյուրի՝ Բեգյուն) կյանքի նոր շրջանը։

Հայաստանի տարբեր կողմերից եկած ճեմարանականների մթնոլորտում զանգեզուրցի Ալեքսանդրը զգաց Հայաստանն ամբողջական, պատմական առումով և հայ ժողովրդին՝ ամբողջությամբ, առանց ռուսահայ-թուրքահայ անմիտ հակադրության, առանց գյումրեցի, ղարաբաղցի, բայազետցի, գորիսեցի, վանեցի, քոլեցի և այլ եցի-ների տղայամիտ խտրականության, պատանեկությունից Ալեքսանդր Բակունցի մեջ համազգային զգացողությունը կայունություն ստացավ։ Սա կարևոր էր մանավանդ այն տեսակետից, որ Բակունցը, դառնալով Զանգեզուրի մեծ երգիչը, միաժամանակ եղավ ամբողջ հայոց բնաշխարհի գունանկարիչը. նրա ստեղծագործություններում զանգեզուրցիներ Մինա բիբիի, Ավան ամու, Անա զիզիի, Խոնարհ աղջկա, Արթին պապի և մյուսների հետ այսօր մեզ ողջունում են սասունցի Հազրոն, վանեցի Մեջիտա մայրիկը, խարբերդցի Լաո-Մարգարը, նաև մշեցի, ղարաբաղցի, ղազախեցի, խոտորջրեցի, էջմիածնեցի, լոռեցի հերոսներ ու հերոսուհիներ։

Ճեմարանում Ալեքսանդրը սովորում էր գրաբար, այլ լեզուներ, պատմություն, երգում էր երգչախմբում։ Նա պատրաստվում էր պատմաբան դառնալու, երբ պատմության ուսուցիչներից մեկը՝ Աշոտ Հովհաննիսյանը, կարդալով Ալեքսանդրի շարադրությունը Վարդանանց պատերազմի մասին, խորհուրդ տվեց իր սանին ոչ թե պատմաբան, այլ գրող դառնալ։ 1913 թ. Թիֆլիսի «Աղբյուրում» տպագրվեց Ա. Բակունցի երախայրիքը՝ «Հիմար մարդը» հեքիաթը։

1915—1917 թթ. Բակունցը զբաղվել է ուսուցչությամբ, հասարակական գործերով, մասնակցել ինքնապաշտպանական խմբերի կազմակերպմանը։ Իսկ 1917 թ. վերջում. երբ ռուս-թուրքական թուլացած ռազմաճակատում կուտակվող մռայլ ամպերը մի նոր արշավիրք էին հղանում հայ ժողովրդի գոյության դեմ, Բակունցը կամավոր մեկնեց ռազմաճակատ։ Մի քանի զորամասերի կազմում նա մասնակցել է Ալաշկերտի, Իլլիջայի, Արդահանի և այլ ծանր ճակատամարտերի։ Բակունցի մարտական ընկերները պատմում են, թե ինչպես նա կյանքը վտանգելով փրկել է մերթ ընկերներին, մերթ որևէ հայ որբի կամ անպաշտպան կնոջ կյանքը։ Բակունցը իսկական ասպետ է եղել նաև հակառակորդի նկատմամբ՝ զինաթափ ու վիրավոր գերուն կամ ծերերին, կանանց, երեխաներին, թուրք թե քուրդ, վնասելը Ալեքսանդրի կարծիքով բարոյական և ազգային անկում էր հայ զինվորի, ամեն հայի համար։

Ծանր հիվանդ (ներքին ականջի սուր բորբոքում) Ալեքսանդրը հասնում է Երևան, երբ Բաշապարանի ու Սարդարապատի մոտ են կուտակվում ահավոր նոր աղետի ամպերը։ Եվ Բակունցը հիվանդ՝ դարձյալ հրացանն առած դիրք է բռնում Սարդարապատի դաշտում, մասնակցում հայոց նոր Ավարայրին։

Այնուհետև՝ Թիֆլիս, Խարկով, գյուղատնտեսական ինստիտուտ։ Եվ գյուղատնտեսի ավարտականով Բակունցը նորից հայտնվում է հարազատ Զանգեզուրում, իբրև գավառային գյուղատնտես՝ դարձյալ նվիրումով, դարձյալ հիշվող ու մոռացված բազում օգտակար գործերով։

Բակունցը ստեղծագործել է անընդհատ՝ ճեմարանի սան եղած օրերին, ուսուցիչ ու զինվոր եղած տարիներին, ուսանողական շրջանում, ռազմաճակատում, թեև իր ստեղծագործությունները մեծ մասամբ «հրապարակում էր» ընկերների շրջանում, լսում նրանց կարծիքները։ Միայն նրա հատուկենտ պատմվածքներն ու հոդվածներն են տպագրվել լրագրերում 1915—1918 թթ.։

Բակունցի տաղանդը այսպես աննկատ ապրեց ու զարգացավ ավելի քան մեկ տասնամյակ և, երբ 1924—1926 թթ. Ակսել ստորագրությամբ իրար ետևից սկսեցին հրապարակվել մի շարք ակնարկներ ու պատմվածքներ, որոնց վիճակված էր դառնալու հայ գրականության գանձարանի մարգարիտներից, շատերն էին զարմացել անհայտությունից միանգամից գրական ասպարեզ մտնող գյուղատնտես-գրողի վարպետության վրա։

Բակունցի մասին գրելիս դժվարություն է առաջանում նույն անձի մեջ միավորված պայծառ մարդուն արվեստագետ գրողից զանազանելիս. այս դեպքում Զանգեզուրը հայ ժողովրդին պարգևել է խղճմտանքով զարմանալիորեն առատ, գգայուն հոգու տեր անձնավորության և խոշոր արվեստագետի միանգամայն միասնություն։ Ակսելյան պայծառ կերպարները՝ նրա հեզահոգի ու բարեսիրտ այգեպանները, հովիվները, բրուտները, ջրաղացպանները, իրոք, որ ակսելյան այդ ներքին պայծառության ճառագայթներն են։

Բակունցը եղավ հայ գյուղի վիպերգիչը, ուստի նա զգալի չափով ներկայացուցիչն էր հայ գրականության, ինչպես ընդունված է ասել, բնաշխարհիկ ուղղության, որ սկիզբ էր առել Աբովյանից և Պռոշյանի ու Աղայանի միջոցով հասել անցյալի նրա խոշորագույն ներկայացուցչին՝ Թումանյանին։ Բակունցը նոր որակ տվեց այդ ուղղությանը. նրա կերպարները, եթե ինչ-որ չափով իրենց մեջ կրում են նախորդ շրջանի հեղինակների թողած դիմաքանդակային ավանդները, ապա ավելի մեծ չափով յուրովի ակսելյան են, նորաբույր հայ գրականության մեջ։ Գյուղական նահապետների այնպիսի հմայիչ կերպարներ, ինչպիսիք են Աթա ապերը («Նզբայրության ընկուզենիները») կամ Ավան ամին («Կարմրաքար»), անշուշտ, իրենց մեջ կրում են Պռոշյանի Խեչանի կամ Թումանյանական «Հառաչանքի» ծերունու ինչ-որ գծեր, բայց և պատկերված են բոլորովին նոր գույներով, նոր համադրություններով։

Իսկ կերպարների մի ամբողջ շարք ուղղակի Բակունցի գյուտն էր։ Խոսքը բարձր գրականության համար մեծ մասամբ աննկատ մնացող այն մարդկանց պատկերումների մասին է, որոնց երբեմն անվանում են սովորական կամ սովորականից սովորական, նույնիսկ՝ անգույն. Հոմերոսի Աքիլլեսից ու Հեղինեից մինչև Տոլստոյի Բալկոնսկին ու Նատաշան գեղարվեստական երկերի մեջ գլխավոր հերոսները, սովորաբար, շրջապատից ինչ-որ ակնառու բարեմասնությամբ կամ դիրքով զանազանվող մարդիկ են եղել։ Նույնիսկ ամենաժողովրդային հայ բանաստեղծի Սարոն, Մոսին, Անուշը գյուղում աչքի ընկնող անձինք էին։ Իսկ ակսելյան լավագույն երկերի գլխավոր հերոսները դարձան գյուղացիական «միակերպ» զանգվածում չնշմարվող մարդիկ՝ մի հովիվ Պետի՝ երեսը ծաղկատար, աչքը հատ ընկած, գյուղից մոռացված, գոմերում տավարի հետ գիշերող, մի Մարգար՝ մանրիկ, ջրակալած աչքերով, երկար, բարակ ոտքերով, չոր կրծքով կամ մի չարքաշ Տիգրանուհի՝ բոպիկ, ճաքճքած, վերքոտ ոտքերով...։

Գյուղացիական զանգվածում, «գորշ» մարդկանց մեջ ակսելյան հանճարը նկատում էր մարդկային հոգու զարմանալիորեն վեհ ու մեծ հարստություններ և վառ գույներով այդ «աննշան» մարդկանց ներկայացնում իբրև իր երկերի գլխավոր և կենտրոնական հերոսներ։ Նա ստեղծեց այդպիսի հերոսների մի մեծ պատկերասրահ, որ ակսելյան յուրովի գույների ընդհանրությամբ հանդերձ բնավորությունների մեծ բազմազանություն ունի. Վանգունց-Բադի և Հազրո, որսորդ Ավի և Շուղանց ալևոր, բրուտ Ավագ և Արթին պապ..

Մանաս և Ջետանց Ունան, Արզուման և Դիլան դայի. Հաթամի աղջիկ և Շարմաղ բիբի, Սոնա և Նազու աղջիկ... շղթան երկար է, և օղակներից յուրաքանչյուրը գրավիչ ու հուզիչ բոլորովին յուրովի։ «Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր, որի ներքևի մասը. գետնից մի մետրաչափ բարձր, կոկիկ տաշած էր. քարե աթոռի պես սարքած։ Կնստեր իր տեղը, կկոթներ հոնի կարմիր մահակին. գլուխը մի կողմի վրա կթեքեր և, եթե զրուցընկեր չունենար, ինքնիրեն կխոսեր և քթի տակ կժպտար։ Երբ նա ժպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին, և աչքերի տակ շարվում էին բարակ կնճիռներ»— այսպես ասքային-հանդիսավոր մուտքով է սկսում Բակունցը մի խեղճ ու պարզ գյուղացու, բայց և հայ գրականության ամենահմայիչ կերպարներից մեկի՝ Արթին պապի մասին իր ստեղծած վիպերգը, որ ձոն է մարդկային ազնվության, հոգեկան հուզիչ մաքրության։ Ահա և այդ ասքի վերջը. «Շատ տարիներ են անցել։ Այդ անցյալը ինձ համար դարձել է հիշողություն, որ հետզհետե ընկղմվում է մոռացության անդունդը։ Միայն երբեմն աչքիս առաջ երևում է իմ Արթին պապի ալեհեր գլուխը, նրա կապույտ աչքերը և խեղճ ժպիտը»։

Հիշենք նաև հայոց լեռների և ձորերի խոտ ու ծաղկի հարազատ բարեկամի «աշխարհից մոռացված» նախրապան Պետու բակունցյան պատկերման մի դրվագը. «Թիկնել էր քարին, նայում էր դիմացի բլուրներին։ Արևի շողերի տակ ինչ-որ վեհություն կար Պետու շարքաշ պղնձագույն դեմքին, վոս ընկած աչքերում անհուն բարություն կար և միամիտ սեր դեպի խոտը, կովը, ծաղկած սարերը»։

Հայ նահապետական գյուղն իր բնորոշ մարդկանցով վաղուց արդեն չկա. բայց և կենդանի է իր մեծ տարեգրի՝ Բակունցի էջերում։ Հայ հրաշալի պատմագիրները ներկայացրել են հայոց արքաների, կաթողիկոսների ու իշխանների լավ ու վատ գործերը, Բակունցը արթիններ ու պետիների տարեգիրն է, այսինքն՝ ռամիկի, անցյալի բուն ժողովրդի, գուցե նրա ամենալավ հատվածի.

Առանձնահատուկ են նաև ակսելյան հերոսական կերպարները՝ Անդո, Հաբուդ, Սեթ... Դրանք հին գյուղի նոր ու նորօրյա մարդիկ են։ Եվ դարձյալ նրանց պատկերումներում ակսելյան ներկերն են. այս դեպքում ևս յուրաքանչյուրն ինքնուրույն անհատի իր դիմանկարով է հանդես եկել։ Թեև, ըստ երևույթին, ճիշտ է նշվում, որ այդ կերպարները Բակունցի երկերում խիստ եզակի են՝ համեմատած չարքաշությամբ ու հեզությամբ բնորոշ գեղջկական կերպարների բազմության ու բազմազանության հետ. բացի դրանից, բոլոր հերոսական կերպարների ծանր, արյունոտ վախճանը աննկատ մնալ չի կարող։

Բակունցն ասպարեզ հանեց գյուղի նաև, այսպես կոչված, բացասական կերպարների մի առանձին պատկերասրահ՝ խոջա Հիբան, Սկրտում, Եփրեմ («Կարմրաքար»), Պանին («Մթնաձոր»), Առաքել («Օրանջիա») և այլն։ Ասում ենք, այսպես կոչված, քանի որ ինչպես մի շարք այլ մեծ արվեստագետներ, Բակունցը ևս չունեցավ բացարձակորեն բացասական կերպարներ. մարդկայինը ինչ-որ տեղ ապրում է ակսելյան ամենաբացասական կոչվելու արժանի հերոսների մեջ։ Պատկերման այս եղանակը իր հետևողականությամբ նույնպես նոր գիծ էր հայ արձակի նախորդ «բացասական» կերպարների համակարգում։

Նախքան Բակունցը ոչ մի հեղինակ նրբորեն քանդակված հայ գեղջկական կերպարների այդպիսի մեծ քանակ և միաժամանակ նույնպիսի բազմա-

զանություն չէր բերել գրական առպարեզ։ Բացի այդ, Բակունցը բնավորությունների կերտման իր արվեստով, մարդկայինի վերհանման ուժգնությամբ, հայ գրականության մեջ, եթե կարելի է ասել, հաղթահարեց գյուղականի պատանեշը։ Այնպիսի խորությամբ և այնքան շոշափելի են բացահայտված նրա գեղջուկ հերոսների հոգեկան աշխարհները՝ զանազան նրբություններով, ելևէջումներով, որ առաջին դիրքում կանգնում են մարդիկ, մարդու հոգեկան կյանքի առեղծվածը, իսկ գեղջկականը մնում է իբրև ազգային-յուրահատուկի դրսևորում։

Ակսելյան ստեղծագործություններին բնորոշ ու գարձյալ՝ յուրովի մարդասիրությունը, համընդհանուր սիրո զգացումը դրսևորվեց ամենից ավելի հանձինս նրա գեղջկական կերպարների։ Նա խորունկ իմաստություն ու փիլիսոփայություն հայտնաբերեց Զանգեզուրի մի աննշան գյուղում բնակվող այգեպան Ավանի ու ջրաղացպան Անդրու խոհերում («Կարմրաքար»), արդարության ու աղնվության ձգտումը մարմնավորված տեսավ մի հասարակ ջրարաշիի կյանքում («Լառ-Մարգար»), բնության հետ մրցող հոգեկան անարատության ու բարության բարձրակետը նշմարեց Այու սարի մի խեղճ հովվի մեջ («Այու սարի լանջին»)... Մենք գիտենք, թե ում է Ա. Պուշկինն իր գեղեցիկ ձոներդում անվանել «մաքուր գեղեցկության հանճար», որն իբրև փուխանցիկ տեսիլ հայտնվել է բանաստեղծի առաջ. դա Ա. Պ. Քերնն է՝ ազնվական ամենաբարձր դասից մի տիկին, իրոք շլացուցիչ իր գեղեցկությամբ։ Իսկ Բակունցը մաքուր «գեղեցկության հանճարը» տեսավ լեռնային մի հեռավոր բինայում, սար Լկած, աթարից կրակ անող բոբիկ գեղջկուհու՝ ալպիական մանուշակի դիմագծերում և պուշկինյան տողերի հետ մրցող արձակ վիպերգ ձոնեց նրան։ Այդ՝ կանացի ամենաքնքուշ զգացումը Ակսելը նշմարեց ցախ կրող ու քաղհան անող խոնարհ աղջկա մեջ։ Սա ամենախոր ժողովրդայնության դրսևորումն է, որ նաև արտահայտությունն է մի առանձնահատուկ մարդասիրության, որը իր շեշտված գույներով զգալապես հարստացրեց հայ գրականության բարոյական ներքնախորանը։

Ակսելյան գրչով ստեղծված հայ արձակի այնպիսի երկեր, ինչպիսիք են «Միրհավը», «Խոնարհ աղջիկը», «Ալպիական մանուշակը», «Սպիտակ ձին», «Կյորևսը», «Տիդրանուհին», ինչպես և «Որդի որոտման», «Կարմրաքար» և «Աբովյան» վեպերի փրկված հատվածները և շատ ուրիշներ կարող են պատիվ բերել ցանկացած գրականությանը։

Բակունցի մարդասիրության մի դրսևորումն էլ ազգերի եղբայրության սրտաբուխ քարոզն է։ Թումանյանի նման նա ևս մեծ ոգևորությամբ խոսեց հայերի և հարևան ազգերի, նաև հեռու, մոտիկ բոլոր ժողովուրդների եղբայրության մասին։ Նրա Հաղրոյի, Ավանի, Աթայի խոհերը եղբայրության մասին իր՝ Բակունցի երազանքն էր, նաև, Չարենցի ճիշտ բնորոշմամբ, ամբողջ հայ ժողովրդի երազանքը, քանի դեռ նա «Գեթ ափ մի հող ունի արեգակի ներքո»։ Հայրենի եզերքից բռնությամբ զրկված, հարազատների շատ արյուն տեսած սասունցի փողհարն ասում է. «Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին։ Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարգերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց դառներ մարդիկ նստեն զիմ շորս բոլոր, երգեմ Լենոց խաղաղության զիմ երգեր. մարդիկ հալալ-զուլալ ախպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն»։

Խաղաղությունը և բարեկամությունը հայերի ու նրանց բոլոր հարևանների միջև Բակունցը համարում էր ամենի ու մանավանդ իր ժողովրդի մեծագույն շահը։ Պատահական չէ, որ նրա ստեղծագործություններում հանդես են գալիս հարևան ազգերի շատ ներկայացուցիչներ, իսկ մի շարք երկեր, ինչպես «Ջորերի լույսը», «Սաբուն», «Սարալուն», «Բիչանագը» և ուրիշներ հատկապես նվիրված են հույների, ադրբեջանցիների, քրդերի և ուրիշ ազգությունների կյանքի ու բարի ձգտումների պատկերմանը։ «Եղբայրության ընկուզենիներում» գովերգվում է հայ և ադրբեջանցի հողի աշխատավորների «տարբերային» բարեկամությունը, իսկ «Խաչատուր Աբովյանում» ընթերցողին հուզում է ռուս ձկնորսի և ուսանող դարձած երիտասարդ հայ գյուղացու հոգեկան մտերմությունը։

Ազգերի եղբայրության ոգեշունչ գովքին Բակունցի երկերում միահյուսված է սեփական ժողովրդի ազգային ավանդների պահպանման կարևորության զգացումը, նաև մտահոգությունը այդ ավանդներից կարևորագույնի՝ հայոց լեզվի գոյատևման նկատմամբ։ Բակունցը գեղարվեստական խոսքում ընդգծվածությամբ արտահայտվեց հայ ժողովրդի գոյատևման համար հայերենի ամենօրյա գործածության և հայկական դպրոցի վճռական նշանակության օգտին։ «Կյորեսում» Բակունցի երգիծանքը՝ ուղղված քաղքենիության դեմ, ամենից որոշակի հարվածում է հայ քաղքենու արհամարհանքին սեփական ժողովրդի լեզվի ու հայոց դպրոցի նկատմամբ։ Նրանց մասին է, որ Ա. Բակունցը «Կյորեսում» գրում էր. «Ի՞նչ ազգի մարդիկ էին և ինչ լեզվով էին խոսում, այնքան էլ հեշտ չի պատմել»։ «Պաապավոր» պաշտոնյաներն ու կրթյալները, որ խավիար էին ճաշակում ու Հոմերոսի գինի, իրենց վայել չէին համարում խոսել հայ հովիվների ու բրուտների լեզվով, այսինքն՝ հայոց լեզվով և ոչ իրենց դավակներին ուղարկել հայոց «խեղճ» ուսումնարան, որտեղ նրանք կարող էին նստել լվացարարուհի Մինայի երեխայի կողքին։ Դրանց մասին Բակունցի գյուղացի հերոսներից մեկը՝ Աբա ապերն ասում է, թե նրանք իր ազգակիցը չեն, «որ նրանք հայ լինեն, ես հայությունից դուրս կդամ... Խոջա Բաղիրի ժառանգները ի՞նչ հայ են կամ Ավագիմովներն ի՞նչ հայ են...»։ Հեղինակը ամփոփելով իր հերոսի ասածն՝ ավելացնում է ազատաղդայնացող «պրոդրեսիստների» ու մեծամեծների մասին. «Հողի չունեին, որ հոգևոր շահ ունենային»։

Բակունցը հայ ազգային հատկանիշների պահպանման միջնարերդը համարում էր հայոց գյուղը։ Միաժամանակ, Պռոշյանի, Աղայանի, Մուրացանի, Թումանյանի նման, նա հայ ժողովրդի բարոյականության ակունքը գյուղաշխարհում էր որոնում։ Հնագույն դարերից ի վեր հայոց շատ քաղաքներ են հայտնվել ու անհետացել, իսկ գյուղը՝ հայոց «Մթնաձորը», կարողացել է լռելյայն դիմանալ երկրի վրայով անցնող ասպատակիչ բոլոր խորշակներին՝ պահպանելով հայ ավանդականը, լեզուն, կյանքի բարոյականությունը,— սա է Բակունցի պատմափիլիսոփայության մի էական կողմը։ Եվ այս է պատճառը, որ գրողը ցավ էր ապրում, երբ հայ երիտասարդները սկսում էին դանդվածաբար լքել իրենց պապենական տները, հայոց բնաշխարհը («Կարմրաքար», «Հին տանը» և այլն)։ Միաժամանակ որպես գյուղացիանես, դիմված նորագույն գիտելիքներով՝ Բակունցը կոչում էր հայ գյուղի հետամնացության, առհասարակ հնի դեմ, ջանում ամեն կերպ պատվաստել նորը գյուղում։ Գրողի մեջ առաջանում էր ներքին հոգեկան բախում. մի կողմից նրան

ամենից ավելի սիրելի էին ու հոգեհարազատ հայ գյուղի նահապետները՝ Դիյան դայիները, Ավան ամիները, Արթին պապերը, որոնք մանկական մաքրասրտությամբ, բարոյական բարձր հատկանիշներով հանդերձ պատմության ասպարեզից վերանում էին, տեղի տալով նոր բարքերի, նոր մարդկանց, մյուս կողմից ինքը՝ Բակունցը այդ նորերից մեկն էր և իր գործունեությամբ նպաստում էր հայ նահապետական գյուղի առհավետ վերացմանը։ Սա գրողի ներսում հաճախ նուրբ մի թախիծ ու տրտմություն էր առաջ բերում, որ և արտահայտված է նրա մի շարք երկերում՝ «Մինա Բիբին», «Մթնաձորի «շարքը», «Կյորես», մանավանդ՝ «Հին տանը», ինչ-որ չափով «Պրովինցիայի մայրամուտը» և այլն։ Այս նկատելով էր, որ Չարենցը գրեց.

Քո «Մթնաձորում» թախիծ է ծորում,
Ու կարոտ՝ մանկութ հարազատ ձորի,—
Աշխատիր, սակայն, որ մութ այդ ձորում
Քո պայծառ ուղին անդարձ չկորի։

Ակսելյան վրձինով աշխարհ եկած գույները, ասվեց, որ շատ յուրօրինակ են, մյուսներից անմիջապես զանազանվող։ Պայծառ են, բայց միաժամանակ ինչ-որ մտածում, խոհ են պարունակում իրենց մեջ, արտացոլում են ներքին մի տխրություն. հիշենք աշնանային մի բնանկար «Միրհավից». «Ամայի ձորերում, դիղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն»։ Գրողի կերպարներից ու բնանկարներից, վերհուշերից ու քնարաշունչ խոսքից զգում ենք այդ պայծառ տխրությունը, Բակունց մարդու և արվեստագետի հոգու արտացոլումը։

Հավանաբար, տխրության երանգը, ինչպես և գրելակերպի որոշ այլ առանձնահատկություններն են պատճառը, որ Բակունցին անվանել են արձակի Տերյան։ Ճիշտ ընկալում է, թեև թերի։ Թերի նախ այն պատճառով, որ Բակունցը իր գրական ատաղձով, լեզվով, տրամադրություններով զգալի չափով նաև թումանյանական է, ապա և մանավանդ այն, որ միահյուսելով հայ գրականության ոճական երկու գլխավոր (երբեմն հակադիր, բայց և միմյանց լրացնող) ուղիները՝ թումանյանական և տերյանական, Ակսելը միանգամայն նոր ու նորածին երևույթ էր և լուսապայծառ բոլորովին նորովի։

Բակունցը Տերյանի հետ ունի նաև մի այլ, եթե կարելի է ասել, պատմական բնույթի ընդհանրություն։ Դա նրա խոսքային նորարարությունն էր և նորարարական ուժը։ Տերյանի՝ 1908 թ. լույս տեսած «Մթնշաղի անուրջներ» գրքույկը հայ բազմադարյան բանաստեղծության մեջ աննախադեպ էր իր լեզվաոճական նորությամբ, թարմությամբ, հետևորդների հսկայական քանակով և արևելահայ բանաստեղծության լեզվի զարգացման ճանապարհին կատարած ուղենշող դերով։ Նման դերը հայ արձակի ասպարեզում կատարեց Բակունցի «Մթնաձոր» ժողովածուն, տպագրված 19 տարի հետո։

Հայ նոր գրականության պատմությունը անցյալ դարի կեսերից սկսած շատ կողմերով նաև գեղարվեստական-ազգային լավագույն ոճի որոնման պատմություն է։ Այդ ճանապարհին հոյակապ գյուտեր են արվել. կարելի է հիշել Բաֆֆու պատմա-ռոմանտիկ գունեղ ոճը, թումանյանական խոսքի ժողովրդային գոհարները և այլն։ Այդ բնագավառում ուղենշող գործ կատարեցին նաև Վ. Տերյանն ու Ա. Բակունցը, առաջինը՝ չափածոում, երկրորդը՝ ար-

ձակում։ Եվ եթե ճիշտ է, որ 1908 թ. հետո հանդես եկած արևելահայ բանաստեղծները ծնվել են տերյանական մթնշաղից, նույնքան ճիշտ կլինի նաև, եթե ասենք, որ Բակունցի ասպարեզ գալուց հետո հայ արձակն անցավ ակսելյան մթնոլորով, առավ նրա բույրերն ու գույները։ Հայտնի են տերյանական մթնշաղից ծնված բանաստեղծները՝ Անուրջից ու Մենուհուց մինչև Քալաշյան, Մահարի ու Չարենց։ Նույնքան հայտնի են նաև բակունցյան մթնոլորից հասակ առած արձակագիրները՝ Վ. Անանյան, Ս. Խանզադյան, Վ. Խեչումյան... մինչև «Անհիձորի» հեղինակն ու նրանից հետո։

Գրականության ազգային բնույթի խնդրում ևս Բակունցը դասական բարձրության վրա է. իրավացի է ռուս գրականագետ Կ. Զելինսկին, երբ ասում է, որ հայ ազգային յուրահատկությունը բացահայտելու տեսակետից Բակունցի երկերը շատ ավելին են տալիս, քան կարող են տալ դիտական բազում ստվար հատորներ։ Իսկական գեղարվեստը ծնվում է ազգային հողի վրա։ Այդպիսին է Բակունցի ստեղծագործությունը։ Դարերի խորքերից եկող սովորությունները, հայ շինականի տան ներսն ու դուրսը, կահ-կարասին, հագուստը, գյուղական տարբեր սովորությունները, հայկական կենցաղի բազում մանրուքներ Բակունցի երկերի գեղանկարչական միջավայրն են, բնավորությունների, հոգեկան կյանքի զարգացման մշտական ուղեկիցները։ Իսկ ամենից ավելի ուժեղ ազգային կնիք, թերևս, ունեն Ակսելի գեղջկական կերպարները՝ իրենց տարբեր բնավորություններով հանդերձ։

Եվ չնայած ազգային այս հագեցվածությանը, ավելի ճիշտ նաև դրանով, Ա. Բակունցը նշեց այն ամենաուղիղ ճանապարհներից մեկը, որով հայ ազգային արձակը կարող է ընթանալ դեպի համաշխարհային ամենախիստ չափանիշներով բնութագրվող գեղարվեստական մակարդակը։ Դրա գլխավոր պատճառը ակսելյան երկերի մեջ շնչող սերն է, մարդասիրությունը՝ բյուրեղյա արվեստի ուժով արտահայտված, որն այս դեպքում և, գուցե ընդհանրապես, կարող էր հանդես գալ միայն ազգային կերպարանքով։ Բակունցի ստեղծագործությունը նաև մի նոր ապացույց էր այն հին ճշմարտության, որ իսկական արվեստը կարող է ծաղկել միայն ազգային հողի վրա։

Եթե Բակունցի ստեղծագործական կյանքի առաջին տասնամյակը (1913—1923 թթ.) կարելի է անվանել նախապատրաստական, երկրորդը (1924—1934 թթ.)՝ ծաղկման, ապա երրորդը, որ նոր միայն սկսվել էր, ինչպես ցույց են տալիս գրողի վերջին ստեղծագործական ջանքերը, կարող էր դառնալ բարձրակետային։ Դա պարզ երևում է «Խաչատուր Աբովյան» վեպի պահպանված հատվածներից։ Հայ արձակում վիպական ոճի աննախադեպ կտորներ են դրանք. հին Երևանի, Չարսու բազարի հալվագյուտորեն տպավորիչ, գունեղ պատկերներին հաջորդում են հեռավոր Դորպատի բնանկարները։ Զարմանում ես, Զանդեզուրի, Հայաստանի այդ խիստ ազգային դեղանկարիչը ինչպես է նոր գույներ գտել զուտ եվրոպական կյանքն ու կենցաղը, Եվրոպացի պրոֆեսորների նեղ շրջապատը և դորպատյան համալսարանական ուսանողության հախուռն կյանքը այդքան համոզիչ վերարտադրելու համար։ Վարպետության նոր բարձունքի էր հասցված գլխավոր հերոսի՝ Խաչատուրի կերպարի դարդացումը։ Հուզաթաթավ վերհուշի հնարանքը, որ հատուկ է Բակունցի շատ երկերի («Միրհավ», «Նամակ ռուսաց թագավորին», «Լառ-Մարգար» և այլն), այստեղ ասքային նոր արժեք է ստանում, երբ գլխավոր հերոսի գյուղական մանկությունը, վանական պատանեկությունը, վերելքը դեպի Արարատի գա-

կաթ ներկայացվում են քնարական վերհուշի վարպետորեն կերտված շղթայով։ Մի շղթա, որի հետագա զարգացումը գլխավոր հերոսին պետք է տաներ դեպի Արաքսի սյուս ափը, ապա Իտալիա՝ գարիբալդիական շարժմանը միանալու նպատակով։

«Խաչատուր Աբովյանը» Ա. Բակունցի գրչի տակ գառնում էր հայոց լավագույն պատմավեպերից մեկը։ Նրա հատվածներն այսօր, մոտավորապես, ցույց են տալիս, թե առհասարակ ինչպիսին կարող էր լինել գրողի ստեղծագործական կյանքի ողբերգորեն ընդհատված երրորդ տասնամյակը։

Բակունցը հայ դրական կյանքում նաև այլ կարգի «հետքեր» է թողել. մի շարք գրքերի, պարբերականների խմբագիր, երկերի հրատարակման ոգեշնչող լինելուց բացի, առավել կարևոր է նրա ու Չարենցի մտերմության շնորհիվ ստեղծված «Դեպի լյառն Մասիս» չարենցյան գեղեցիկ վիպերգը, ինչպես և նրա ու Դ. Դեմիրճյանի բարեկամության շնորհիվ, Ակսելի խորհրդով ծնունդ առած «Վարդանանք» պատմավեպը։

Այս տարի Բակունցը «դարձավ» 80 տարեկան, թեև նա սիայն այդ տարիների կեսն է ապրել։ Ժամանակին շատերը հասկացան, որ հանձին Բակունցի հայ դրականության երկնակամարում փայլել սկսեց առաջին մեծության աստղ։

Ժամանակին Բակունց երևույթը ամբողջ մեծությամբ զգաց, հասկացավ Չարենցը. «Իմ միակ բարեկամին», «Պայծառ բարեկամիս», «Որպես նշան դրական և անձնական անխախտ սիրո և բարեկամության»— սրանք չարենցյան նվիրագրություններն են՝ ուղղված իր ընկերոջը, իսկ դրանց պսակը 1937 թ. Չարենցի գրած բանաստեղծությունն է.

Եվ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի բուրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերը հնադարյան...

Եվ իրոք, Բակունցի արվեստը այսօր կանգնած է հայ մշակույթի հինավուրց քարաքանդակ կոթողների շարքում՝ որպես մարդասիրությամբ առգորված գեղարվեստական արձակի հրաշալի օրինակ։

АКСЕЛЬ БАКУНЦ

(к 80-летию со дня рождения)

РАФАЭЛ ИШХАНЯН

Резюме

А. Бакунц был крупным новатором в области развития армянской художественной прозы. В своем творчестве он объединил два стилистических направления восточноармянской литературы—туманяновское и теряновское. Избрав основной темой своих произведений жизнь армянской деревни, Бакунц создал галерею разнообразных, глубоко человечных, оригинальных образов. В образах простых крестьян, ничем не выделяющихся в своей среде, Бакунц с большим художественным мастерством и любовью раскрыл все богатство духовного мира тружеников земли.